



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

*30 մարտի 2021 թվականի
Թիվ 65-Ա*

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի մարտի 30-ի դռնբաց նիստում, քննարկելով մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) հնարավոր խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

2021 թվականի մարտ ամսվա ընթացքում սպառողների կողմից Հանձնաժողովի թեժ գծի միջոցով ստացվել են մի շարք բողոքներ այն մասին, որ խոշոր առևտրային ցանցերում և այլ վաճառակետերում նկատվում է հավի ձվի պակասորդ, իսկ այն առևտրի կետերում, որտեղ հավի ձու առկա է, այն իրացվում է զգալի բարձր գնով՝ 1 ձվի դիմաց հասնելով 100-ից մինչև 120 դրամի:

Հանձնաժողովը ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվական միջոցների կողմից ներկայացված մի շարք հաղորդումներ, որոնցում նույնպես բարձրացվել են 2021 թվականի մարտ ամսվա ընթացքում հավի ձվի պակասորդներին և իրացման բարձր գներին առնչվող հարցեր:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովը միաժամանակ իրականացնում է սպառողական լայն նշանակություն և կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող ապրանքային շուկաներում ներառված ապրանքատեսակների իրացման պայմանների պարբերական ուսումնասիրություններ: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ևս արձանագրվել է, որ մարտի 16-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում խոշոր առևտրային ցանցերում առկա է եղել ձվի պակասորդ, իսկ այն օրերի ընթացքում, երբ վաճառքում առկա է եղել հավի ձու, դրա իրացման գինը կազմել է 74-ից մինչև 91 դրամի միջակայքում՝ կախված հավի ձու արտադրող ընկերությունից, հավի ձվի տեսակից և կարգից:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովն իրավասու է որոշում ընդունել պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների և սպառողների դիմումների, տեղեկատվության, զանգվածային լրատվական միջոցների հաղորդումների և իր տրամադրության տակ գտնվող այլ փաստաթղթերի հիման վրա, որոնք վկայում են սույն օրենքի խախտման մասին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը:

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների, թեժ գծով ստացված բողոքների և զանգվածային լրատվական միջոցների հաղորդումների համակարգային դիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ հավի ձվի իրացման ոլորտում՝ մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել Օրենքի հնարավոր խախտումների, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման և (կամ) հակամրցակցային համաձայնության (չհիմնավորված կամ խտրական գների սահմանման և կիրառման, գների չհիմնավորված փոփոխությունների կամ պահպանման և այլն) հատկանիշներ, որը հնարավոր է գնահատել միայն վարչական վարույթի ընթացքում:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշումներ Օրենքի հնարավոր խախտումների, վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից Օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, 30-րդ հոդվածի 8-րդ մասը, 34-րդ հոդվածը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վարիանտ Գրուպ», «Լուսակերտ», «Լուսակերտի Էլիտ», «Գնթունիք», «Աշտարակ ձու» սահմանափակ պատասխանատվությամբ, «Արզնու տոհմային ԹՏԽ» բաց բաժնետիրական և «Արաքս թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ